ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МИНИСТР
MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC OF ARMENIA
MINISTER

"28"..... 08..... 2018
01/08..... / 1890-18...

**ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ԿԱՐՈ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Հակոբյան,

Շնորհակալություն եմ հայտնում Ձեզ Եվրոպայի հայերի համագումարի կողմից ս.թ. սեպտեմբերի 2-ին Գերմանիայի Քյոլն քաղաքում «Նոր Հայաստան, նոր սփյուռք» խորագրով խորհրդաժողովը կազմակերպելու և ինձ հրավիրելու համար:

Անչափ բարձր ենք գնահատում Եվրոպայի հայերի համագումարի նման նախաձեռնությունը, որը լավ առիթ է մեկ հարկի տակ հավաքելու Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրով հետաքրքրված կառույցներին ու անհատներին և միասին քննարկելու Հայաստանի, հայ ժողովրդի ու սփյուռքի խնդիրները, առկա մարտահրավերների դեմ պայքարին ներգրավվելու արդյունավետ միջոցները:

Նախարարության աշխատանքի ծանրաբեռնվածության պատճառով, դժբախտաբար, չեմ կարողանալու մասնակցել խորհրդաժողովին, սակայն վստահ եմ, որ այն կանցնի բարձր մակարդակով և իր կարևոր նպաստը կբերի Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանն ու բոլորիս հուզող խնդիրների հաղթահարման գործին:

Խնդրում եմ Ձեզ խորհրդաժողովի արդյունքներն ուղարկել նաև Սփյուռքի նախարարություն:

Հարգանքով՝

**ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Կատ.՝ Ա. Նիկոյան
Եվրոպայի հայ համայնքների վարչություն
Հեռ.58 56 01 (112)

ՀՀ 0010, Երևան, Վ.Սարգսյան 3
0010, РА, Ереван, ул. В.Саргсяна, 3
3 Str. V. Sargsyan, Yerevan, 0010

հեռ.՝/тел.:/tel.: (+374 10) 58 56 01 (801)
ֆաքս՝/факс:/fax.: (+374 10) 58 91 57
էլ.փոստ՝/Эл.почта:/E-mail: ministry@mindiaspora.am